# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Օգոստոսի 18-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանի հրավերով Հայաստան ժամանած Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի նախագահ Ռենե Վան Դեր Լինդենին՝ ԱԺ փոխնախագահի, Եվրոպական կառույցներին ինտեգրման հարցերի ժամանակավոր հանձնաժողովի նախագահ Տիգրան Թորոսյանի ուղեկցությամբ:

Ողջունելով պատվարժան հյուրի անդրանիկ այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Նորին Սրբությունն անդրադարձավ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու առաքելությանը հայ ժողովրդի կյանքում: Վեհափառ Հայրապետը իր գոհունակությունը հայտնեց ԵԽԽՎ նախագահին այն նպաստի համար, որ Եվրոպայի Խորհուրդը իրականացնում է ժողովրդավարական արժեքները ամրագրելու Հայաստանի նորանկախ պետականության կյանքում, Հայաստանի՝ Եվրոմիությանը ինտեգրվելու գործընթացում, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործում: «Մենք լիահույս ենք, որ Եվրախորհրդի աջակցությամբ պիտի կարողանանք տարածաշրջանում խաղաղությունն անշրջելի ու անբեկանելի դարձնել և նաև արդար, օրինական լուծումներ ապահովել տարածաշրջանում առկա, հատկապես մեզ հուզող Ղարաբաղյան հիմնահարցին», - մասնավորաբար նշեց Ամենայն Հայոց Հայրապետը:

Իր հերթին Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի նախագահը շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը ջերմ ընդունելության համար և կարևոր նկատեց այս հանդիպումը: Պրն Լինդենը անդրադարձավ վեհաժողովի՝ ժողովրդավարական արժեքների հաստատմանը և մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված աշխատանքներին՝ նշելով, որ բոլոր այդ գործընթացներում կարևոր է Եկեղեցիների և կրոնների դերակատարությունը, որոնք միջեկեղեցական և միջկրոնական երկխոսությունների միջոցով կարող են մեծ ներդրում ունենալ հասարակության մեջ այդ արժեքների ամրապնդման գործում:

Հանդիպմանը նաև խոսվեց Հայ Եկեղեցու և աշխարհասփյուռ իր հոտի առջև ծառացած մարտահրավերների, հասարակական կյանքում Եկեղեցու գործունեության, Լեռնային Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին:

Հանդիպմանը ներկա էր Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը: